ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆԻՆ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՈՒԻՆ ՀԱՅՈՑ ԱՆԳԼԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊՍԱԿԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՈՒՄԱՅԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Անցյալ հոկտեմբերին, Մեր ընտրուբենեն և Ս. Օծումեն անմիջապես հետո, մեծ ուրախություն եղավ Մեզ եպիսկոպոսական շնորհաբաշխություններ կատարել Միածնաէջ Ս. Տաճարին մեջ:

Աստուծո ողորմությամբ և Ձեր հավատացյալ ժողովրդի միջնորդությամբ, Դուք ևս արժանի եղաք Մեր սուրբ ձեռնադրությամբ տեղ գրավելու Հայ եկեղեցվո բարձրաստիճան հոգևորականության հույլին մեջ:

Հոգիով ու մարմնով աճած և դաստիարակված ըլլալով Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանական կրոնաբույր մբնոյորտին մեջ, Դուք արդեն երկար տարիներե ի վեր կծառայեք մեր Ս. եկեղեցիին, Ձեր աշխատանքը պտղաբեր դարձնելով մեր ժողովրդի հոգևոր կյանքի շինության ի խնդիր:

Իբրև նոր սերունդի ներկայացուցիչներեն մին, Ձերդ Սրբազնությունը կոչված է կարևոր դեր ստանձնելու Հայաստանյայց եկեղեցվո վերածաղկման ճանապարհին վրա:

Ահա թե ինչու, նախ գնահատելով Ձեր արժանիքները, և երբորդ՝ ի նկատի առնելով այն կարևոր աթոռը, զոր կգրավեք իբրև հոգևոր հովիվ Անգլիո հայոց պատվական գաղութին, և կամենալով նաև, որ Լոնդոնի հայոց հոգեվոր առաջնորդը ըլլա միաժամանակ Մեր ներկայացուցիչը Անգլիկան եկե-

դեցվո Հովվապետ՝ Քենտրբերիի Դերաշնորհ Արքեպիսկոպոսի մոտ, Մենք այսու հայրապետական կոնդակով Ձեզ կնշանակենք ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՀԱՆԴԻՊ:

«Առաքեսցէ քեզ Տէր օգնութիւն ի սրբութենէ իւրմէ, և ի Սիոնէ ընկալցի զքեզ»:

Ձեր Սրբազնության վստահելով այս պատվաբեր բարձր պաշտոնը, ապահով ենք, թե առավելյալ եռանդով ու հոգևոր իմաստությամբ պիտի առաջնորդեք Ձեր հաւատացյալ ժողովուրդը, ամուր պահելով զայն մեր լույս հավատքի վեմին վրա, հոգիով ու մտքով կապելով զայն մեր սուրբ ավանդություններուն, մեր մշակութային արժեքներուն և մեր Ազգի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին:

Եվ միաժամանակ շենք տարակուսիր, թե արժանավորապես պիտի ներկայացնեք Հայ Եկեղեցին և Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսական Աթոռին առջև, որուն մեր Եկեղեցին և Մայր Աթոռին հետ ունեցած ի Քրիստոս սիրո ավանդական կապերը մեզ համար հոգևոր մխիթարության աղբյուր կհանդիսանան:

Մենք պարտ կդնենք Ձեր վրա՝ աստվածահաճո եռանդով և շինարար ոգիով պահել և առավել ամրապնդել այդ սիրո կապերը Անգլիկան և Հայաստանյայց Եկեղեցիներու միջև՝ ի փառս Աստուծո և ի զօրացում մեր Տիրոջ և Փրկչի Հիսուսի Քրիստոսի Ս. Եկեղեցվո:

Կասկած չունինք, որ սույն կոնդակով կուրախացնենք նաև Անգլիո, հատկապես Լոնդոնի և Մանչեստրի մեր հավատացյալ հայ ժողովուրդը, որ անշուշտ այսուհետև զՁեզ պիտի շրջապատե և ենցուկ ըլլա Ձեզ և Ձեր բոլոր ձեռնարկներուն, առավելյալ սիրով և եվիրումով:

Մենք կաղոթենք, որ Տերը Ձեզ պարգևե երկար, քաջառողջ կյանք և աշխատանքի բեղմնավոր շրջան՝ ի մխիթարություն հավատացյալ ժողովրդի և Ս. Եկեղեցվո:

Սիրով ի Քրիստոս, ամուր հավատքով դեպի Ձեր սուրբ առաքելությունը և հավատարմությամբ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, եվիրեցե՛ք Ձեր կյանքը անձնուրացությամբ Ս. Եկեղեցիին և Ազգին:

Կօրհնենք հիշատակը Ձեր զաղութի մեծ բարերարի՝ լուսաբնակ Գալուստ Կյուլպենկյանի, հիմնադիրը Լոնդոնի հայոց Ս. Սարգիս Եկեղեցվո:

Կօրհնենք զՁեզ, հոգևոր դասը, Եկեղեցվո պաշտոնեությունը և Ձեր ժողովուրդը արտաքուստ բարեմաղթություններով:

Կօրհնենք բոլոր աստվածասեր անդամները Լոնդոնի և Մանչեստրի եկեղեցական խորհուրդներու և զաղութային վարչություններու, Արքարյան և Ս. Էջմիածնի հիմնադրամներու վարչություններու, մշակութային, բարեսիրական և երիտասարդական միություններու՝ մաղթելով բոլորին արևշատություն, բարություն և գործոց հաջողություն:

«Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ն սեպտեմբերի
1956 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ԹՆԶ,
ի Ս. Էջմիածին: